

Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճեննել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share – copy and redistribute the material in any medium or format

Adapt – remix, transform, and build upon the material

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՈՅ. ԽՈՐՀՐԴ. ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Պրոլետարներ բոլոր յերկրների, միացեք.

ՆԱԽՐԻ ԶԱՐՅԱՆ

ԶՐԱՆՑՔԻ

ԿԱՊՈՒՅՑ ՅԵՐԿՐՈՒՄ



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԱԳՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ — 1926



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՅԻԱԼԻԱԾ. ԻՆԴԵՐԴԱՎԻՆ ՀԱԽԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Պրոլետարիներ բոլոր յերկրների, միացեք.

ՆԱԽԻ ԶԱՐՅԱՆ



ՔՐԱՆՑՔԻ


ԿԱՊՈՒՅՏ ՅԵՐԿՐՈՒՄ

A 38468



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԿՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ - 1926



Գրառեալվար № 293թ.


№ 334.

Տիրաժ 2500.

---

Պետհրատի յերկրորդ տպարան Յերևանում—№ 399.

ՅՈԳԵԳՈՒԹԱՆԻ ՅԵՐԳԵՐ



## ՀՐԱԺԵՏԸ



Եյ, դու հնացել ես,  
Հիմա դու անցել ես,  
Դնացել ես արդեն,  
Դյուղ իմ հին հայրենի,  
Խառակոնիս:

Ով ե հիշում հիմա:  
Յես հազիվ եմ հիշում. —  
Տեսակներդ նեղ, ցած,  
Վոր բովքովի նստած պատավների նման  
Չըուցում են մուժում—  
Հնիշ, հնիշ, հնիշ...

Ով ե հիշում զանգը իրիկնային ժամի,  
Վոր շրջում եր հիվանդ ճամբաների փոշում.

Ու բեզարած կյանքը,  
Ու նախիրները խոնչ  
Տուն եր քշում.

Յերբ դաշտերի վրա մնում եր յոկ քամին,  
Դեքերում եր մենակ սոված զայլի նման  
Ու դեղնամած, ուժատ թիերի ականջին  
Շշնջում եր.—«աշուն...»:

Ով ե հիշում զանգը...

Ու, այդ կյանքը տխուր,  
Այդ թիերը մեռնող հիմա ո՞վ ե հիշում:  
Աշնան շուքում լացող այդ խուղերը խարխուր,  
Ստվերները քուրծուր,  
Ստվերները հազիվ իրիկնային մուժում,  
Ճռինչը սայլերի,  
Դանդաղ,  
Դանդաղ,  
Ծույլ...

Հիմա ո՞վ ե հիշում:

1922 թ. Հենինական



**ԶՐԱՆՑՔ ԵԼԵՔՏՐՈՖԻԿԱՑԻԱ**





## Հ. Ս. Խ. Հ.

«... Հայաստանին հարկավոր եւ Խորհրդային  
իշխանություն ու կանալիզացիա...»

### ԼԵՇԵՆ

Ազգամիջյան թրեքն ել  
Փանգոտեն թող,  
Չքանա՞ն.  
Հայատան,  
Հարկավոր եր քեզ  
«Սովետական կարգեր ու կանալ»:

Այժմ ել՝  
Յեւ—  
Հնծիր, գյուղացի,  
Քո հունձը կարմիր, կարմիր,  
Քո հունձը հասուն.  
Տուր, բանվոր  
Տուր, ամուր մուրճը զնդանին,  
Դղբղա թող բոցը հնոցում,  
Ու շինիր, շինիր,  
Խոփ շինիր,  
Մանգաղ հասցրու,  
Շոգեգութա՞ն տուր գյուղացուն:

Եյ—Մենք, մեկ-միածույլ  
Աշխատանքը տա՞ք տանենք,  
Տա՞նք,  
Լարենք, ճիզերը ճկուն  
Կառուցե՞նք,  
Կառուցե՞նք  
Կառուցե՞նք  
Կո՞ւռ:

Թող ձեռքերն անդուլ կռե՞ն,  
Թող միտքը ուղեղն ակոսի,  
Թող խոփը խո՞ր խրվի հերկերին,  
Թող ջուրը ջրանցքներով հոսի:

Մենք-դուք,  
Արթուն  
Բանվոր զյուղացի,—  
Մեր կամքը զոռով կը ուանդի,  
Ինչ վոր մեր դեմ թումբ,  
Ինչ վոր արգելք ընդդիմաղիք:

Մենք հրամայում ենք

Մկանով,

Մանգաղով,

Մուրճով.—

Եւ, աշխարհ,

Ճախրիք քեզ—

Գնա—

Լենինի կապած կամուրջով:

1922 թ. Լենինական

## ՄԱՐՄՆԱՑՈՂ ՅԵՐԱԶՆԵՐ

Շիրակի ջրանցքի թեվերը շին<sup>1)</sup>)

Փուլել են

Դաշտերի վրա հին,

Արտերին լի.

Աքրըշում շղարշի պես

Շին կապույտ շոգոլ

Փարվել ե.

Հին, հին,

Մանթաշի

Փեշերին,

Դոշին:

Շիրակի հին դաշտերում չոր

Կարկաչում են,

Շրջում են զալարուն.

Շնչում

Ջրանցքները շին-ջուր,

Շոսսեներն ուղիղ.

Ու նյարդաջիղ

Անթիվ

Առու,

Յերկաթուղի.

Ու չորս կողմից

Փչող հողմից

Ծափ են տալիս,

Ծուփ,

Արտերը վոսկեծույլ,

Վոսկեծոր,

Վոսկեծով,

Ծով,

Վոսկի վարսերը հողի:

Շիրակի շին դաշտերում

Հիմա

Շափշափում են,

Թափթափում,

1) Շին — ժողովրդական բարբառով՝ գորշ-կապույտ:

Խլրում

Շոզ—

—Շա՛փ— շա՛փ

Թափ—թափ...

Յերկաթ,

Կաշի

Թեվերն անդուլ

Շոզեզութանի,

Վոր վեր և շպրտում

Թոքերից

Շունչը տաք,

Շի՞ն, շի՞ն, շի՞ն,

Շի՞ն—բարդ բարդ,

Շի՞ն—բարդ բարդ

Գոլորշի՞ն

Ու

Գիսախոիվ քշում և հեռու,

Խառնելու զործարանի

Շի՞ն-բարդ-բարդ վոլորուն բաշի՞ն:

---

Ահա յեկավ եշը,  
Ելեքտրական դարի տիրական եշը:  
Ահա հնչում ե բառացը թեժ  
Ու վիթխարի.

—Դ ո՛ւ ո՛ւ ո՛ւ ո՛ւ ք,

Զգո՛ւո՛ւո՛ւո՛ւո՛ւյշ,

Գալիս եմ հրռես,

Ով կա՞

Զը կանգնի թող ոելսերին

Թող վոտ-զլուխ բաշի,

Իսկույն!

Ահա յեկավ, յեկավ,

Յեկավ,

Յերկաթակող

Շոզ-թոք

Շախում ե

—Շի՛ի՛ի՛ի՛ի՛ն

Շի՞ն-բարդ-բարդ...

Շինքարդ-քարդ,  
Շափ-շափ,  
Թափ-թափ...

Շիրակի ղաշտերը թնդում են թափից.  
Շիրակի սրտերը խնդում են:

Յերեվանից ե գալիս եշը,  
Յերկաթականջ վիթխարին,  
Բերել ե համբույրը հասոն  
Հրազդանի շուրթերից.  
Բերել ե բույրը բոլոր մրգերի,  
Բերել ե արրըշում,  
Բամբակ ու բուրդ,  
Վոր զործարանի քաղցը անհանգուրդ  
Գրգոի:

Դալիս ե հեռվից դեռ,  
Արեվի ծագման ծիրից,  
Բերել ե Բոմբեյից թերթ,  
Զին-Մաճինից՝ չինի,  
Դարչին

Ու չայ.  
Յերկաթականջ եշն անցել ե  
Դեղին գետից ինդոս  
Դանգեսից—Զանգու,  
Արփաչայ:

Վողույն քեզ զրնգուն զալիք,  
Վոր մոտ ես արդեն,  
Յեկել ես.—  
Նետել ես քայլդ տունելում.—  
Դու քանի անզամ անցել ես սրնթաց  
Իմ սրտի տաք տունելով:

1922 թ. Հենինական

## ՎԵՐԶԻՆ ԹՈՒՆԵԼՈՒՄ

Խո՞ւլ, խո՞ւլ, խո՞ւլ  
Քլունկները քանդում՝  
Քլունկներն անդուլ մտածում են  
Տունելի զիխում:

—Վարպետ,  
Թեվերս թուլանում են.  
Բարութի զազը կծու,  
Շնչել չի լինում ել:  
Չուրն ել հո վերից ուղղակի  
Ծոծրակիդ ե կաթում.  
Տես շորերս թաց են, հազիս,  
Յես մրսում եմ:

—Դրսումը  
Իրավ վոր լավն ե.  
Զղղղուն հովը,  
Յերկինքը զուլալ,  
Արեվ,  
Դրսում ապահով ե:  
Լավ ե դրսում լինել,  
Լավ ե վարել.  
Քան թե տունել քանդել:—  
Բայց ինչ ոգուտ, ընկեր,  
Յերբ արտերը կորթ են,  
Յերբ տունդ կույր,  
Տօւնելը պետք ե մեզ, ընկեր,  
Ինչպես կոկորդդ՝  
Կամ աչքըդ՝  
Քե՛զ:

—Վարպետ, վարպետ,  
Վերեվից կտորներ ընկան,  
Այս քարը մի տես ահազին...  
Իսկ յեթե հանկարծ քանդվի՞,  
Փուլ զա զանկի՞դ...

— Հանգիստ կաց, ընկեր,  
Յերկրագնտի մթին արգանդում  
Անհամար մեզ պես քանդում են.  
Անթիվ բարեր կան կախ  
Ամեն մեկի զանգին:  
Հանգիստ կաց, ընկեր,  
Ամեն մեկը նրանցից  
Իր իսկ բուն թշնամու համար և  
Կյանքը վտանգած,  
Իսկ մենք քանդում ենք մեզ համար,  
Մեր տան,  
Վոր վաղը անվտանք վարենք:

— Տունելը վոնց վոր յերկարեց:  
Իսկ մեր վորոշումը...  
Զընի՞ թե թարա ենք փորել:

— Գոտեպնդիր սիրտդ,  
Լսում ես.— Իրեն մեր դիմաց  
Խուլ, խուլ խրոցներ անդուլ,  
Գոտեպնդվիր, ընկեր,  
Քլունգդ տուր:

— Յես ել եմ լսում.  
— Յես ել եմ...  
— Գալիս են ուղիղ մեր դեմ.  
— Արդեն...  
— Ես ս ե,  
— Ես ս ե,  
— Ես ս ե,

— Եյ—զզույշ:  
Քլունկներն իրար չը խըրեք:  
— Լույս, Լույս  
— Բավական ե:  
— Ուռա—  
Տունելը տունելին համբուրեց:

Տունելում տոն ե,  
Վողագուրանք.  
Ու նրանք ելերտիկ աչքերով  
Տունելից նայում են դուրս,  
Տունելից տեսնում են Հայաստանը  
Վերածնության տեսնդում։  
Աչքերը ելերտուլամբեր,  
Մազերը ծոխ ամսպազնած。  
Խոսքերը կուռ կոմսոմոլ,  
Ծիծաղը ծաղիկ պատկոմ  
Ու նրա ուղեղին իմաստոն  
Սովորկոմ։

1924 թ. սպոսոս

## ՇԻՐԱԿԻ ԶՐԱՆՑՔԸ

Նվիրում եմ Հայաստանի համալսարանի  
գյուղատնտեսական ֆակուլտետի 24—25  
թ. ԱՄ կուրսի ուսանողներին:

Հեյ-հեյ,

Զրանցքը շիրակի—

Յերակի պիս կապույտ

Կը կապի:

Արտերի տոնն ե,

Զրարբուր

Կապույտ կիրակին,

Շիրակի չոլերը հին

Չիման չեյին,

Անգուր,

Անգրդի՝

Շիրակի լուս չոլերը չոր եյին:

Ոզուտ չկար,

Թեկուզ չութը չանգուտեր,

Թեկուզ տրակտորը շուռ տար:

Հեյ-հեյ—

Շիրակի չոլերը վուկեհեր

Հոռ ու ծուռ են,

Թե վերից արեւիը համրուրի,

Վարեց՝ ջուրը:

Դաշտերումը

Յեռում ե յեռանդը գյուղացու:

Իսկ վաղը կզա

Մնիխների հաղթական բանակը,—

Մուխ,

Մուխ,

Գոլորշի,

Շին գորշահեր

A II  
38462

X



Կրարձրանա զոռ  
Կամպանա,  
Արեվի դեմ կը բռնի  
Արեվը կապշի,  
Մի զարկ ել,  
Մի զարկ ել, ընկեր,  
Քլունգդ լրիվ խրի յերկրի քունքերին,  
Քանդի՛ր,  
Քանդի՛ր,  
Քանդիր հանդր հան տունելի տուր,  
Ու յելիր դուրս:

Տե՛ս,  
Վորքան վոր ծանր եր աշխատանքդ,—  
Այնքան ծարավ հանդերն՝ անթիվ:

Տե՛ս,  
Վորքան վոր ջուրը ջրանցքում  
Հորդուն ե,  
Վորքան լույսերով հղի,—  
Այնքան զյուղեր կան կույր,  
Այնքան մթությունը  
Խի՛տ:

Դի՛ր—  
Թող դռոա ոնգահուր մոտօրը.  
Շիրակի դարավոր զիշերում  
Թող բերի  
Ելեքտրոլամբերի միտինգ,  
Ելեքտրոդիկտատուրա:

Տուր հա,  
Տուր, ընկեր մի քլունգ ել,  
Մի զարկ ել հաղթական տարտով,  
Հետո զա թող տրակտորը  
Տենդուտ,  
Բնիքն իրեն բանի,  
Թափթափի,  
Թող թնդան հանդերն  
Աջխատանքի թափից:

Հեյ-հեյ  
Մի զարկ ել...

Արտերն արդեն արթնանում են,  
Մոռւմ են՝  
Գա, զրկի կանալը:  
— Յելի՛ր, յելի՛ր, յելի՛ր —  
Յերգում ե դաշտերի  
«Բնտերնացիոնալը»:

1922 թ Լենինական

## ՀՆՁՎՈՐԸ

Տիսուր ե զնզում զերանդին,  
Հասկերը շրջում են — «ուշ ե...»—  
Ինչքան ել յեռաս յեռանդից,  
Գերանդին արդեն տնտել ե:

Յերբ ենտեղ հնծվոր մաշինան  
Շափշափում ե շախին յեռանդից,  
Շպրտում ե խուրձերը շինած,—  
Ել ուր ե զնզում զերանդին:

Եշ—քոնն ե հունձը, մաշինա,—  
Տիս ր ե զնզում զերանդին:

1924 թ. Յերեվան

## ՄԱՍԻՍԸ

Ես Մասիսն ե հին, են, վոր  
Հանել նահապետի հարեն,  
Ու վոնց վոր բալշեվիկ բանվոր  
Բաց կապույտ բլուզ և հազել:

Արեվը զլխին զլխարկ,  
Արագի լայն զոտին կապած.  
Արտերի ռանզերանգ չուխան  
Կապել ե պորտին սիզապանձ:

Զարդարուն զոզնոցն իր ահա  
Փոել ե մինչեւ Յերեվան.  
Մասիսը զոռում ե աժդահա  
Աշխատանքի հավար:

Կանզնած ե հրես նրա ղեմ  
Գործարանը ժիր անհանգիստ  
Ու վոնց վոր զոմեց մրադեմ  
Փնջում ե Մասիսի ղեմքին:

Մասիսը ղեմքը ղեն թերում  
Ծոռում ե իրանն արագ,  
Կանզնում ե կրկին աննկուն  
Լեռների ըմբուռ ռահվիրան:  
Հավաքում ե ջլուտ մատներով  
Բամբակի հործքը լուսալիք  
Գործարանի հրում  
Ու — կոռ — կոռնում ելի:

Գործարանը ծանր բերանփակ,  
Խժոռում ե, մոմոռում ներսից,  
Ծամում ե հում հում բամբակ  
Ուզում ե մարսի:

Ու հանում փշում ե տաք  
Մասիսի մրոտ յերեսին,  
Ու վոռում վոտքերի տակ  
Անթիւլ թոփ նոթի, բիազի:

Այսպես ե հին սարը ետք.—  
Շոգոլին կապույտ շապիկ,  
Կապել թիլ զոտին Արագի,  
Դրել ե Արեվը՝ կեպի:  
Ու կարմիր աստղը ճակատին  
Գոռում ե հպարտ հիմա ծեզ.—  
«Ե՞լ սարեր, դիմ յերկրագնդի,  
Միացեր.»

1922 թ. Հենինտկան

## ԶԱՆԳՈՒ\*)

Բավական ե, Զանգու,  
Հոսանքդ կույր:

Տխուր ափերըդ—  
Բանդըդ—  
Կը բանդենք:

Կը բանդենք կապանքդ քար  
Ու կուրծքը քո սմբած,  
Վոր դուրս զաս դու,  
Ազատ զնզաս,  
Հազարաթեվ գրկես  
Յեվ զզաս յերկրի կարոտը  
Հրկեզ:

Մենք ել, Զանգու,  
Վոնց վոր դու,  
Մեր հոգին կույր  
Դարերով  
Դրել եյինք բանդ:  
Մենք վորոնում եյինք ճամբան:

Ու մի ժանդ անհծք,  
Մի դաժան դեվ,  
Մի չեղած աստված  
Բանդել եր մեզ,  
Մեր հոգին:

Ու, Զանգու, մենք,  
Աղոթել ենք ու լացել.  
Ու չենք իմացել  
Վոր համբուրում ենք  
Մեր կոկորդին հուալ մատերը.  
Ու չենք իմացել,  
Վոր այն այն աստվածը,

\*) Լույս ե տեսել 1922 թ. «Մալրմ»-ում տողերի հաջորդականությունը խանգարված և բոլորովին աղավաղված: ՀԵՂԻՆԱԿ

Այն տերը,  
Վորքան վոր կանչ  
Վորքան աղոթք լսի,—  
Այնքան անգութ ու խուլ կը դառնա,  
Վորովինետեվ նա սուտ ե, սին,  
Վորովինետեվ նա չկա:  
  
Մենք, Զանգու,  
Մեր խելոք, բարեպաշտ զանգերով  
Յեղել ենք կույր  
Հազար անգամ ավելի,  
Քան դու,—  
Վորովինետեվ քեզ բանդել ե  
Բանդըդ իրական,  
Իսկ մեր հոգին՝  
Մի չեղած աստված  
Կամ դեվ:

---

Հիմա, Զանգու, մենք  
Արդեն տեսնում ենք  
Սյուները բորբոսնած մեր բանդի:

Հիմա, Զանգու, մենք,  
Արդեն կրում ենք մեր սրտերում  
Մի արշալույս լույս  
Ու տապ  
Ու ջրիդ չափ թափ  
Ու զայրույթ:

Հիմա, Զանգու մենք.  
Քանդում ենք բանդը մեր հին,  
Մեր միտքը ճմուռմ ե աչքերը  
ճպուռած դարավոր նիրհից:

Ու դուրս կը զանք բանտից՝  
Դղրդուն  
Գիտակցությամբ ցնցված.  
Շիկացած զանգերով  
Գրոհ կտանք ափերիդ դեմ.  
Կը խուժենք խումբ առ խումբ,  
Խուռն ու խիտ  
Խառն հախուռն անթիվ,

Ու ոռւմբը զսպըված մեր վոխի  
Դարավոր բանդիդ տակ կը պայթի:

Թումբ-թումբ,  
Թնդյունով  
Կը փլչեն,  
Կը թռչեն ոդ  
Ավերըդ, պատերըդ,  
Բանդըդ դիվի...

Դու չես հավատում, գիծ-Զանգու,  
Դու չես հավատում  
Վոր կյանքըդ կարող ենք տանել  
Ուրիշ հոսանքով:

Դրել ես ջրերըդ բանդ,  
Կարծում ես հենց ե՞ղ ե ճամբան,  
Սեվանից-Արագ՝ Լալազի՞ն:

Քարվանի նման հոգնած,  
Դարերի վողբը շալակիդ,  
Ուզում ես հեռանա՞ս, գնա՞ս:  
Չես ուզում ճամբադ թերել,  
Քաղցր ե կապանքդ քեզ,  
Դե, դե, դե,  
Իզուր ես հրում դեն  
յեռանդուն գրոհն աշխատանքի,  
Կոիվ ե տաք,  
Անգին,  
Հոսանք ե Զանգու,  
Զանգու,  
Հնի նորի կոիվ,  
Մեր քլունգներն անզութ  
Քար առ քար քանդում են գետինը,  
Իսկ քեզ դեռ քաշում ե հի՞նը.  
Ուզում ես հին հունով գնաս,  
Մոռում ես, վրնջում,  
Պոչիդ վրա կանգնած:  
Բայց նոր հունը արդեն,  
Արդեն քաշում ե քեզ,  
Ալիքներուդ ջահել  
Զոկվում-զնում են, տես.

Իսկ դու դեռ ֆշշում,  
Ալիքներդ քաշում ես հետ,  
Ուր ես...  
Չես կարող պահել,  
Բացվել ե նոր ճամբան,  
Իզուր ե,  
Մեր բանդը կանգնել ե հին հունիդ դեմ.  
Արդեն կիսվել ե ջուրը  
Գնում ե յերկու հոսանքով.  
Դիժ-Զանգու, գիժ-Զանգու,  
Դիժ-Զանգու,  
Ինչ ես դու հին բանդիդ կպել,  
Ինչ զիտես՝ ինչի՞ կը հանդիպես  
Անոգուտ ընթացքդ թերես թե  
Դեպի հանդերըդ հրկեզ,  
Դու չես զզում յերաշտը թեժ  
Ու յերներանգ յերազը դաշտերի,  
Վոր մնում են քեզ  
Քո զրին:

---

Յերեվանը կը դառնա  
Մի չքնաղ հաղթական կին,  
Կը կանգնի կուռ վոտքերով  
Աշխարհի հանդեպ,  
Առուներիդ գոտին աղամանդե  
Կապած մկանակուռ մեզրին  
Կը հառի հայացքը հմայիչ  
Հեռուն:

Ել ո՛վ կը հիշի հին Զանգուն,  
Արովյանի զանգում  
Գալարուն  
Խորիս ու փրփուր թքող  
Կատաղի, անզոր են Զանգուն  
Ել ո՛վ կը հիշի:

Ալիշանի տրտում  
Լոին Զանգուն,  
Հայկական պոետի պես  
Կույր ու լալկան Հրազդանն  
Ել ով կը հիշի:

Հիմա, Զանգու,  
Կապուտաչ կոպերիդ մեջ  
Սեվան ծովից ծավի  
Մինչիվ Արազ—տուն  
Հազար տեսարան կա  
Ելեկտրոկայան ու սրահ:  
Ու խառնվում են զրնգուն ջրիդ  
Բանվորական յերգերն ուրախ  
Ու ալիքներն աշխատանքային  
Կանչերի:

Զանգու, զուրբդ զանգակ,  
Հիմա թանգ ե դառել,  
Յերգըդ հին ու լավան՝  
Բաղդի զանգ ե դառել,  
Ու մեր կամքը հզոր  
Հազար թել ե տարել—  
Կապել ե քեզ աշխարհին,  
Հիմա քեզ կը լսեն դիփ  
Չիզագո, Պեկին  
Կամ Փարիզ.  
Կամ թեկուզ Հնդիկ  
Ու դեռ անթիվ հեռուներն  
Ընկերական յերկրագնդի:  
Ու մեր բրոնզե զրնգուն զանգից  
Միտքը մեր վոնց վոր շատրվան  
Հրավառ վեր կը խփի  
Արեվի ռումբին հավերժաթիժ,  
Աստղերի հեռուն դեպի—  
Դեպի տիյեզերքը:  
Ու ճամբին  
Կը վառի, յեռ կը հանի  
Լուսնի սիրտը սառն ու դեղին,  
Վոր այնտեղից բերի վար  
Լուսնամետաղ,  
Լուսնապղինձ,—  
Շինելու նոր մեքենա՝  
Նոր զյուտերով հղի:  
Դու չե՞ս հավատում  
Գիժ Զանգու:

1922 թ. Անդինական

## ԱՄԱՌՆԱՅԻՆ

Յեռում ե նորազարթ որը,  
Շափշափում ե շոգ յեռանդով.  
Յեռանդուն մի տրակտոր ե  
Ամառվա որը յեռացող:  
Յես մի խոլ—խնդուն շոֆեր եմ,  
Արեվը ոռու՝ իմ ծեռքում,  
Վեր քշտած կուռ թեվերըս,  
Քշում եմ հրաշեկ յերգով:  
Քշում եմ մինչ մթնի որը.  
Մինչ ընկնի իրիկվա քամին.  
Մինչ հասնի շոգ տրակտորը  
Իրիկվա զառաժր կարմիր:

1924 թ. Յերևան

**ՍԱՅԼԻՑ-ՍԱՎԱՐՆԱԿ**



## ԱՅԵՐՈԿԱՐՈՏ

Հնծվորին հաց եյինք տանում  
Ու հետո ճամբան դեպի տուն—  
Արտերի վոսկի սավանում  
Սպիտակ կտավի մի թոփ:

Հեքաթում եր մայրս ուրախ  
Հասկերի զրնգուն խինդով.  
Յերեկոն սարերի վրա  
ցանում եր հանգստի թող:

Արտերը—հնծվորներ հոգնած—  
Սրբում են դեմքերը բրտնաթոր  
Մշուշի—ներկած թաշկինակ—  
Մշուշի մետաքսե հոթով:

— Յեղել ե, վորպես նեքյաթում  
Մի թոչուն հրաշք, հրածին...  
ՄՌ, նրան նստես յեթե դու,  
Կը թոչես Արաք, Հինդ ու Զին...

Ու հոգիս ուռչում եր խինդով,  
Լցվում եր թոչուն մի հույզով.  
Բացվում եր անափ իմ սրտում  
Մի անափ հուրիուր հորիզոն:

Ծփում եր, ծով եր յերեկոն...  
Արեվը—սելվոր բեզարած—  
Թիկնում եր նարինջ բրտինքով  
Իրիկվա խալիի վրա:

Յերենը հեքյաթում. այնտեղ,  
Արեւի անկողնում թիժ,  
Ամպերը—թոչուններ վոսկեթեվ—  
Թոչում են դեռ կարծես թե:

Չուլվում են հեքյաթ իրական,  
Արեւին իր փեշերն ե բաշում.

Գնում են սայլերն համբաքայլ  
իւ իկվա ծույլ մշուշում:

Յես փարվում եյի մայրիկիս  
Վոսկեվարս մի հասկի նման,  
Այրում եր հուրհուրան հոգիս  
Մի կարոտ, վոսկի մի ամառ:

— Ախ, ինչո՞ւ միայն հերյաթում,  
**Թոչում** են թեվավոր, թեթեվ,  
Բեզարած յեզները՝ այստեղ,  
Սայլերը դանդա՞ղ. թույլ:

Ճոնչում եր ճամբան ցավագին  
Պատովող մի թոփ կտավի,  
Ու լալիս, մորմորում եր հոգիս,  
Յեզների անելեզու ցավից:

\* \*

Վողջ զիշեր հույզով մի ոտար  
Ճսգում են հասկերը տրտում,  
Թոչունի թեվերին նստած՝  
Վողջ զիշեր թոչում եմ հեքաթում:

Վողջ զիշեր գնում եր ճամբան  
— Փոշոտված կտավի մի թոփ —  
Ու յեզներն անոթի, անբան,  
Քաշում են սայլերը դեպի տուն:

1922 թ. Լենինական

## ԱՅԵՐՈԿԱՄՔ

Իսկ այժմ, ինչ հեքյաթ, ուզենք—  
Աշխարհի դաշտերի վրա  
Կենեն թեվավոր կը սուրան  
Բյուր հազար սավառնող սել:

Սելը վեր ող կը նետենք,  
Յեզները արոտում թող.  
Խոտի դեզը կը թռչի թեթեվ.  
Լսե՞լ ես բանն ես հեքյաթով:

Մի Հասան, սելվոր մի Սեթո  
Կնատի ու կոպ չը խփած  
Արտերից հանկարծ կը զա տուն,  
Հենց ասես չանցած ճանապարհ:

Կամ նստած թեթեվ մի թիթեռ  
Կը թոշենք մինչեվ Զին.  
Յերկիրը ողից կը դիտես,  
—Հեքյաթի թոչուն չի:

Թիթեղե թեվերով կը հերկենք  
Յերկնրի աղամանդ հեռուն.  
Յերկիրը կը մնա ներքեվ  
Վոնց վոր մի ծանոթ ձմերուկ:

\* \* \*

Իսկ յեթե վորոտան, պայթեն  
Մահառիթ ուումքեր, պատերազմ,  
Իսկ յեթե ուզենա բանդել  
Կապիտալն ազահ, վատերազ,  
Իսկ յեթե յերկրագունդը նոր  
Արյունի հեղեղով հարթեն,  
Իսկ յեթե բերեն թնդանոթ  
Զրանցքի մեր կապույտ յերկրի դեմ,  
Յերկաթե թիթեռը թող դառնա  
Ռմբածիք ահավոր ուրուր,  
Մահառիթ սավառնի վունա,  
Թող թափի դինամիդ, ուումք:

Թող ժողվի մեղուն ամեհի  
Զայրույթի թունավոր զազեր  
Ու պատրաստ խայթոցում պահի  
Թափելու համար—թե ուզեն:

Բայց մենք ուզում ենք վոր նա  
Ամեն առավոտ, յերեկո  
Մեր ազատ հանդերից դառնա  
Հասկերի զրնզուն յերզով:

1922 թ. Հենինական

## ՍԵԼՎՈՐԸ

Յել ե, յերկար ե, փոշի յե, քար ե:

Սելը դժար ե, յելը դժոխը.

Հեռու ե կալը, գոմեշը ժար ե,

Որը յերկար ե, արեվը՝ շոգ:

Արտերը ժանդ են, կյանքը դժար ե,

Յելը յերկար ե, յելի՛ր, յելի՛ր,

Չորա ջան կյանիքը դժար ե, ժար ե,

Քանի կպած ենք—սելին...

Փոշի յե, քար ե—հե՛յ ջան, վազզալլ,

Ա՛խ, ինչ անուշ ե պոյեզդի զալլ:

1924 թ. Յերեվան

## ԱՅԵՐՈՎՈՂԶՈՒՅՆ

Մարտի դոմեշի հիշտոտելին

Եւ ինչ եշ,  
Եւ ինչ յեզ,  
Դոմեշ.

Ինչ անսնը սելք կարկածած.—  
Հասել են թոչելու ժամեր:

Կյանքը հիմա այերոպլան,  
Այերոկյանը.  
Կյանքը հողից հառնում,  
Սավառնում եւ բարձր:

Արծիվ,  
Բազե,  
Ճանապարհ!!!!

Եշը ապշած նայում  
Բեռան տակից վեր՝  
Հմայվում եւ Հըրեն—  
Յերկնը բիլ արտերով  
Սավառնում են հեռո  
Այերոներ շարքով—  
Այերոեշ,  
Այերոսել,  
Այերողրող,  
Ֆուրզոն  
Վողջույն հալեվոր սելից,  
Վողջույն թոշնասելիդ,  
Վողջույն:

Ու վորքան վոր կան  
Եշ, ուղտ, յեզ,—  
Անլեզու, անքան, անսսոն,  
Ու վորքան համբաւ, բեռնակիր  
Աշխարհի դժար ճամփերում—  
Բոլորից,  
Բոլորից,

Բոլորից,

Փառք քեզ:

Վորբան թանգ ես,

Սավառնակ,

Ինչըան տանը քեզ,

Սավառնակ,

Վոր թանգ լինի:

Ինչըար վոր յեզ ունենք,

Ֆուրգոն, դրոք ու սել—

Թող քեզ մատաղ լինի:

Ու թեվերիդ ներքեվ

Կյանքը մի հայրենիք,

Փոքրիկ մի թաղ լինի:

Յե՛լ, թռի՛ր, թռնասել,

Յել սավառնի,

Դոռա.

Մեր զյուղերից բարձր,

Քաղաքներից բարձր.

Մեր սարերից բարձր,

Մեր սարերի վրա:

Ե՛յ

Մասիս,

Ալագլազ,

Ելքուս,

Կազբեկ,

Ուրախե՛ր:

Մանավանդ դու, Մասիս,

Փեշերդ լայն բաց,

Ճամբա,

Այերորակ շինի:

Մանավանդ դու Մասիս,

Վոր տեսել ես,

Զգացել ես,

Վոր լացել ես հնից—

Յեզների տանջանքը համը,

Սայլերի ընթացքը հազիվ

Վոտքերիդ հենց տակ:

Ու բանի՛ դար  
Քանի՛ դար:  
Այժմ դեն տար ամպերի չալման  
Տես թեթեվ թոփքը,  
Սայլերի թոփքը թեթեվ—  
Տես,  
Արեվի գլխարկիդ մոտ:

1922 թ. Յերեվան



# ԴՈՒՔԱՆԻՑ · ԿՈՇՊԵՐԱՑԻԱ



## ՔԱԽԱՆ

Դողում են դեղին հասկերը,  
Տրտնջում իրար ականջի.  
Փշերը փարթամ հասկել են  
Վոնց հերու՝ հարուստ դուքանչին,

—Պիտի զա կարմիր մանգաղը—  
Փշերը բռնի քախանի,  
Հասկերը մենակ անկար են,  
Թե կարմիր մանգաղը չանի:

Ինչպես վոր յեկավ հեղկումը  
Դուրս բշեց դուքանչուն զյուղից,  
Այդպես մեր մանգաղը հղկում ե—  
Փշերը փոռում ե հողին:

Հասկերը խաղաղ ծաղկում են,  
Յերբ կա մեր մանգաղը խիստ:

1924 թ. Յերևան

## ԿԱՐԿՏԻ ԱՄՊԸ

Խոժոռ ե կարկըտի ամպը:  
Դաշտերի դժգոհ քահանան.  
Ու վոնց ել բարկությամբ ե  
Վար կախել միրուքը խոնավ:

Ուր վոր ե, հրես կը զոռա,  
Կանիծի արտերը դիւի,  
Կը ծեծի նախիր ու սարակ—  
Կը քշի հանդից:

Եյ—մի,  
Չը զոռաս, տեր բարա,  
Հավաքիր միրուքըդ դեն,  
Դու յերբեք ել սուրբ չես—  
Հապա<sup>®</sup>.—  
Ծնունդը արդեն զիտենք:

Հիմա կոմսոմոլ մի ռումբ կա  
Միրուքիդ թեժ թշնամին.  
Ենպես կը թոցընենք միրուքը,  
Վոնց արագ Հոկտեմբերյան բամի:

Կարկըտի ամպը  
Մնում ե մեզանում,  
Ինչ հեզությամբ ել  
Անձրեվ ե ցանում:

1924 թ. Յերևան

## ԳՅՈՒՂԱՑԻՆ ԴՅՈՒՔԱՆԶՈՒՆ

Հայ—հայ,  
Պարոն դուքանչի,  
Են հին եր,  
Վոր քոնն եր զյուղն ել,  
Գյուղացին ել:

Են վոր քաղցր,  
Անուշ եր զյուղացին,  
Վոր կթում եր հողը վոնց վոր կով  
Ու վոսկի կաթը բերում քեզ,  
Ինքն իր բերանը փակած իր ձեռքով  
Քսում եր կարագը քո հացին:

Են կարագի պես կակուղ շինականը  
Եղ բոլորը, պարոն դուքանչի,  
Գնացին:  
Զկան ել:  
Զի՞ք:

Հին կյաները,  
Զանգի պես լավ եր հնչում:  
Զընգում եր:  
Զե՞:

Զե վոր վոսկի եր քեզ,  
Կարագ եր:  
Իսկ մեզ—  
Զար տանջող կամչի,  
Զինովինիկ,  
Զոր հաց,--  
Տանջաների զորշ մարաք եր:

Եղ կյանքը չի բ:  
Զկա:  
Մոռացիր:  
Հույսերը դավդարից ջնջիր:

Եսոր մերն ե կյանքը:  
Եսոր մենք ենք:  
  
Մերն են եսոր գործկոմը,  
Կոմքջիջն ու կարմիր բանակը:  
Եսոր զվարթ ե զնզում զերանողին,  
Եսոր Շիրկանալ կա:  
Ու մեկ ել՝  
Վոր ձեր քեմբովը չի,  
Զսպանակ ե,—  
Եսոր կա կոռպերատիվ:

Եսոր տրակտոր կա,  
Արտելներ կան մի քանի,  
Շուտով շողեզութանն ել կզա  
Կը քանողի հիմքը դուքանիդ:

Կզա—  
Շուտ կրտա հողը,  
Յերկիրը,  
Կզա—  
Շուտ կը տա խելքը աշխարհի,  
Կը վոնողի հանողից արորը թերի,  
Ու վորպես աշխատանքի դիկտատոր  
Կը տիրի:

Նորից կարագը առատ կը լինի  
Ու կյանքը կարագի պես անուշ,  
Բայց վոչ թե ուսին,  
Դուքանչուն,—  
Զե,  
Զը հավատաս պարոն,  
Կը լինի մեզ ընդհանուր,  
Բանվորին,  
Ռանջբարին  
Յուրաքանչյուր:

Իսկ դուքանցի՞ն:

Դու կանչի որերը ըրված,  
Քեզ հարկավոր ե մահ—  
Անմահական ջր,

Կամ չե  
Մի ժանեղոտ դամա  
Կամ  
Չկան:

1924 թ., Յերևան



ՅԵՐԵՍՆԵՐՍ ԴԵՊԻ ԳՅՈՒՂ



## ՅԵՐԿՈՒ ԱՐՁԱՆ

Վաղարշապատի ձեմարանի բակում  
կանգեցրված են յերկու արձան.  
մեկը Գամառ Քաթիպայինն ե, իսկ  
մյուսը Խորհրդային իշխանության  
որով կառուցված ե 1920 թ. քաքա-  
ղաքացիական կռիվներում ընկած  
12 կոմմունարների հիշատակին.

Պարտված վիճակին իր հլու,  
Հնորյա տրտմության տիպար,  
Այստեղ դեռ կանգնած ե մոլոր  
Գամառ-Քաթիպան:

Յեվ ումն ե նայում նա այդպես,  
Այդպես խոժոռդեմ ու խոռվ:  
Յեվ ի՞նչ ե փնտում նա այստեղ  
Բրոնզե իր անզեն աչքերով:  
Կարծես թե տեսնում ե կրկին  
Յերկիրը հրկեզ ամայի,  
Կարծես թե ուզում ե յերգի  
Կրկին հին յերգերն ազգային:

Կարծես թե ուզում ե հանգած  
Կրքերը կրկին բորբոքի,  
Վոր դուրս գան ազգերը հանկարծ  
Բռնեն մեկմեկի կոկորդից:

Նայում ե անթարթ մի կետի,—  
Կարծես թե տեսնում ե դեռ սեվ  
Սգվոր Արաքսին իր մոտիկ  
Պարսիկը նստած նամազի:

Լեռները ուղտի պես նստած  
Բանտել են հայացքը նրա,  
Ու նա կարճատես, անվստահ  
Նայում ե դաշտին Արարատ:  
Ներկան խլրտում ե իր շուրջը,  
Կերտում ե նոր կյանք որ-որին,  
Իսկ նա դեռ համառ ու տրտում  
Նայում ե անցած որերին:

\* \*

Իզուր եր, Գամառ-Քաթիպա  
Ազգային յերազդ անթով,  
Վոր այդպես կախարդել եք  
Հին որերի խանդով:

Զը տեսա՛ր, այստեղ պատերազմ,  
Դրոշներ յելան արնաթոր:  
Ու հայի հին սիրտը յեռաց  
Մի կարմիր, մի նոր կարոտով:

Զը տեսա՞ր: Այստեղ եր, Ընկան  
Կոմմունար ընկեր տասներկու,  
Վոր ազատ Հոկտեմբերը զնզար  
Սրբերի այս խուլ բաղաքում:

Զը տեսա՞ր: Զես տեսնում կրկին  
Բանվոր մի արձան քո դիմաց.—  
Նրանց հիշատակը անգին  
Կանգնել ե համառ հիմա:

Ազ ծեռքով բռնած ե մուրճ,  
Զախ ծեռքում հուրիուրան դրոշ,—  
Նայում ե դեմքով խորամուխ  
Համաշխարհային հեռուն:

Տեսնում ե կարծես թե բարձր  
Մասիսից ել դեն դեռ.  
Հորիզոններ ամբողջ ամպած,  
Մասսաներն ըմբոստ ամեն տեղ:

Այդ նա յե, հայ ոամիկ Համբոն,  
Զը տեսա՞ր—շուռ յեկավ մեկից  
Ու զնաց միեւնույն ճամբով  
Թուրք, թաթար ու ոռւս «ոամիկի»:

Զը տեսա՞ր, յելավ անոթի,  
Ազգային յերազդ հերքեց—  
Շինեց «Արցունքի հովիտ»-ից  
Զրանցքի կապույտ մի յերկիր:

Մինչդեռ դու տրտում ես կրկին  
Այն ինչ դեմք թնդում ե, տես,  
Ու թող հավիտյան մըրկի  
Աշխատանք, միտինգ ու հանդես.

Քո դեմքը աստանդական,  
Վոնց սպին անցյալի վերքի,  
Մնացել ե խոր քանդակած  
Մեր կայտառ ներկայի կրծքին:

Այն ինչ նա կանգնած ե քո դիմաց՝  
Մի քանվոր կոշտ կավածեփ,  
Բայց, նայիր, թզուկ ե հիմա  
Բրոնզե բյուստը նրա դեմ:

Մինչդեռ դու տրտում ես կրկին,  
Այն ինչ նա հզոր աչքերով  
Նայում ե համարձակ հեռուն—  
Դալիք փոթորկին:

1924 թ. Վաղարշապատ

## ԿՈՄՅԵՐԻՏԱԿԱՆ ՅԵՐԱԶ

Նվիրում եմ ԳԱՄՆԻԿԻՆ

Այն գիշեր քնում՝ հեռավոր  
Յենթաշեֆ զյուղն ելինք զնում.  
Բացվել եր մեր դեմ առավոտ,  
Ճանապարհ մի նեղ, անկանոն:

Բայց զնում ելինք մենք ուրախ,  
Յերգում եյնք զիլ կարոտով:  
Արեվը մեր ճամրի վրա  
Ճանել եր վարդագուն թող:

Գնում ենք վարդագույն ուղին,  
Տեսնելու, ինչ վոր քննելու:  
Գնում ենք ոգնելու զյուղին:  
Չեռքներիս զրի՞չ եր... Քլու՞նկ...

Հասել ենք: Ինչ վոր կառուցում են.  
— Թատրոն եր, ակո՞ւմբ, զործարա՞ն: —  
Վազում ենք հարա-հրոցով  
Տեսնելու մի վայրկյան առաջ:

Բայց հանկարծ մի փլած տան մոտ  
Նստած եր ծանոթ քահանան.  
Կանգնեցեք: Նայում ենք՝ մութ  
Աչքերին ու միրքին խոնավ:

Յերբ փլած այդ տան արանքից  
Դուրս թռավ մի փոքրիկ մանուկ,  
Ինչպես սուր մի քար ծոծրակիս՝  
Ականջիս շպրտեց անունը:

Մազերս զլիսիս դառան դեղ—  
Յեղբայրս եր ասես հարազատ:  
«Քույրիկս հիվանդ ե, զիտե՞ս,  
Ներս մտիր մի տե՞ս....»—ասաց:

Ու փախալ մտավ, վոնց վոր մուկ,  
Յած նեղ մութ դոներից ներս.  
Յետելից զնացի լուռ-մունջ  
Մթի մեջ պարզելով ծեռները:

Դնում եյի յես չորեքթաթ.  
Չորեցոք ընկնում, խարխափում,  
Հատակում աղբակույտ եր թաց,  
Ու մութ եր, մութ եր խորխարույր:  
Ու հանկարծ...—ո՛, սարսափ, սարսափ,—  
Աղբալած լաթի ծալքերում  
Չեռքերը հուսահատ պարզած։  
Յես տեսա հիվանդ իմ քրոջ։  
Յես տեսա մահինը թարախուո.  
Ու խարխուլ խուլ թոքերից  
Լսեցի հազը նրա խոր,  
Նայեցի թաց պատերին։  
Նա նայեց թրջված ձեռներիս  
Մեռելի իր պաղ աչքերով  
Ու նվազ-նվաց. — «Ներիր,  
Հիվանդ եմ թույլ անկարող...»։  
Ու թվում եր ինձ յերազում,  
Վոր քույր ունեմ յես հարազատ.  
Շաշում եր ամոթն յերեսովս  
Ինչպես խարազան։  
— Իսկ ո՞ւր ե մարդը, — գոռացի, —  
Ինչու յես ընկել ես որին, —  
Եմ ձայնս նման եր լացի,  
Սարսափ եր թուած թոքերից։  
— Եմ մարդս զնաց պատերազմ։  
Վաղուց ե... զնաց ու չեկավ...  
Ասում են այնտեղ նա մեռավ...  
Զկա՛:  
— Իսկ ինչո՞ւ յես այստեղ պառկել,  
Ինչո՞ւ յես գալիս դուրս.  
Ո՞վ ե քեզ այստեղ բանտարկել,  
Քույր։  
— Չեմ կարող դուրս գալ. նայի՛ր,  
Քահանան այնտեղ ե հիմա.  
Եմ մեղքից անիծել ե նա ինձ,  
Վոր այստեղ մնամ մինչ ի մահ...  
»

— Եսկ դու ինչ մեղք ես կատարել:  
— Զգիտեմ. Նրանք են ասում.  
Տանուտերն ու նա... Հրեն,  
Գալիս են. Առ' աս:—

Ու գալիս եր ծեր քահանան.  
— Յե՛վ թշվառ եր նա, յե՛վ դաժան—  
Գրպանից սեվ խաչը հանաձ  
Տալիս եր անեծքի նշան:  
— Ոզնեցե՛ք, ոզնեցե՛ք, ե՛յ,  
Ընկերնե՛ր, հասեք հավարի,  
Ես ումն ենք, ումն ենք մոռացել,  
Ես ո՞ւմն ենք, մատնել խավարին:

Այդ տունն եր ամբողջ թոքերումս  
Մղկտաց սարսափ, ահազանգ,—  
Վոնց վոր տաս արեվի գրոհ՝  
Դուք հանկարծ ներս մտաք, հասաք:

Նայեցիք նրան—նրա մեջ  
Բոլորդ ել տեսաք ծեր քրոջ.  
Նայում եք ամոթով ամենքդ  
Ինձ նման՝ ցեխոտ ծեռքերով:

Ու բռնած մեղքից, թեվերից  
Վոտքի ենք հանում աղջկան,  
Յես դարձա նայեցի նորից.—  
Այն փոքրիկ մանուկը չկա՞ր:

Եսկ հիվանդ այդ կինը դարձավ  
Մի մեծ գյուղ, վոնց վոր ավերակ.  
Քահանան ժա՞մ եր, մահարձա՞ն.—  
Հսկում եր այդ գյուղի վրա:

Մենք այդ սեվ դաժան ժամի տակ  
Տակառներ դրինք բարութով.  
Ու հանկարծ թունդ վորոտաց,  
Բարձրացավ ամբակույտ, թող...\*

Ամեն ինչ հանկարծ խառնվեց...

\* \* \*

Գնում ենք նորից։ Ու—հեռուն—

Այդ կինը ամալի մի ծվեն

Լողում ե պայծառ լազուրում։

Փռվել եր մեր դեմ քարուղին—

Արթուկած մի թոփ բիազի։

Գնում ենք մենք մարտակամ

Կոմսոմոլ մի խումբ—միասին։

Մեր ճամբին առավոտ զարուն,

Քարաշեն շենքեր ու կանաչ։

Ժամուռ եր կինը քիչ հեռու—

Մի զուլալ կապուտաչ կանալ։

Քաղաք եր շքեղ մեր դիմաց,

Մեր զյուղն եր ասես յենթաշեմ։

Վերեվում մի կանաչ կամար,

Ներքեվում սպիտակ մի շենք։

Ու կանաչ կամարի վրա

Ծածանվում եր փայլուն մի դրոշ.

— «Բանակումք, կինո, լպարան» —

Գոռում եր մեծ տառերով։

Կանգնել ենք բարձր մի դարի,

Նայում ենք դաշտին Արարատ։

Պատկոմներ են քայլում վիթխարի

Քայլելով դաշտերի վրա։

Հրահանգը հնչում ե հատու,

Զարկում ե վոնց մուրճ զնդանին,

— Այն փոքրիկ մանչն եր անտուն։

Թնդում են ոդ ու տանիք։

Արեվը ժպիտ քթի տակ՝

Շարքերում Մասիսն եր ջահել

Պատկոմի նման մի տիտան

Թեվերը ազ ու ծախ պահել։

Մասիսը զոռում եր, «առաջ»

Թմբուկ եր, միտինգ, հրահանգ։

Դրված եր Մասիսի վրա

«Պատկոմական նահանգ»։

— Մե՛կ, յե՛րկու, մե՛կ յե՛րկու, մեկ,  
Զարկում եր զիլ բարձրածայն.  
Խառնվեց իրար յերգ ու մեզ  
Ու յես արթնացա՛

---

— Մե՛կ, յե՛րկու, մե՛կ, յե՛րկու, մեկ,  
Փողոցը լցրել աղմուկով,  
Պատկոմներն ուրախ յերգում են.  
«Դեպի զյուղ, դեպի զյուղ»:

1924 թ. Յերևան

## ԼԻՐԻԿԱ

Վողույն քեզ զրբնզուն զալիք,  
Վոր մոտենոմ ես արդեն,  
Գալիս ես,  
Նետել ես բայրող տունելում.—  
Դու բանի՛ անզամ անցել ես սրնթաց  
Եմ սրտի  
Տար  
Տունելով:

1924 թ. Տերեան

# ՑԱՆԿ

I

## ՇՈԳԵԳՈՒԹԱՆԻ ՅԵՐԳԵՐ

1. Հրաժեղություն . . . . . լիրես 5

### Ա. ԶՐԱՆՑՔ—ԵԼԵԿՏՐՈՖԻԿԱՑԻԱ

2. Հ. Ս. Խ. Հ.	9
3. Մարմնացող լեռազներ	» 11
4. Վերջին թունելում	» 14
5. Շիրակի ջրանցքը	» 17
6. Հնձվորը	» 20
7. Մասիսը	» 21
8. Զանգու	» 23
9. Ամառնային	» 28

### Բ. ՍԱՅԼԻՅ—ՍԱՎԱՐՆԱԿ

10. Այերոկարոս	» 31
11. Այերուկամք	» 33
12. Ահլվորը	» 35
13. Այերովողջույն	» 36

### Գ. ԴՈՒՔԱՆԻՑ ԿՈՈԹԵՐԱՐՑԻԱ

14. Քախան	» 41
15. Կարկտի ամսղը	» 42
16. Գյուղացին դուքանչուն	» 43

II

### Դ. ՅԵՐԵՍՆԵՐՍ ԴԵՊԻ ԳՅՈՒՂ

17. Յերկու արձան	» 49
18. Կոմյերիտական երադ	» 52
19. Լիրիկա	» 57



ԳԱԱ ՀԻՄՆԱՐԱՐ ԳԻՒ. ԳՐԱԴ.



220038467



(254)

A ii  
38467

ԳԻՆՆ Ե 35 ԿՈՐ.